ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N: 9230047-2
ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Գյումրի 31 հունվարի 2019 թ.

ՀՀ Շիրակի մարզպետարանը, ի դեմս մարզպետին փոխարինող Վ. Գրիգորյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Սպառող), մի կողմից, և «Հայաստանի էլ ցանցեր» ՓԲԸ «Ղարս» մասնաճյուղ «Արթիկ» էլ ցանցը, որը գործում է համաձայն իրեն տրամադրված գործունեության թիվ 092 լիցենզիայի (այսուհետ՝ Մատակարար), ի դեմս տնօրեն Հ. Աբրահամյանի, մյուս կողմից, հիմք ընդունելով 2018 թվականի հունվարի 29-ին կնքված N: 9230047 Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 42-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1. Մատակարարը պարտավորվում է Պայմանագրով և սույն համաձայնագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Սպառողին մատուցել Պայմանագրով նախատեսված էլեկտրական էներգիայի մատակարարման ծառայությունները (այսուհետ՝ ծառայություն), իսկ Սպառողը պարտավորվում է ընդունել մատուցված ծառայությունները և վճարել դրա համար:
2. Սույն համաձայնագիրը գործում է 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3. Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Ծառայության մատուցման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:
4. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերը լուծվում են դատական կարգով:
5. Սույն Համաձայնագիրը բաղկացած է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
6. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

7.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՍՊԱՌՈՂ	ՄԱՏԱԿԱՐԱՐ
ՀՀ Շիրակի մարզպետարան	«ՀԷՑ» ՓԲԸ «Ղարս»մ/ճ
	«Արթիկ» էլ ցանց
ք. Գյումրի Գ. Նժդեհի 16	ք. Արթիկ, Ղարիբջանյան 29
ՀՀ ֆինանսների նախարարության	«Արդշին բանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 2474663153608510
Հ/Հ 900211205027	ՀՎՀՀ 01520882
ՀՎՀՀ 05507437	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ